27. ՔԱՋԼԻԿԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի չի էղնի մե թագավորմ կէղնի։ Էս թագավորը մի լավ հ'էգի է ունենում ու իրեք հատ էլ տղա։

Ամեն տարի հ'էգին կանչում, ծառեր թոմար լավ ծաղկում, էնպես որ տեսնողի հավասն է գալում։

Մոնց էր էղնում, չգիտես, մեկ գիշերվա մեջ էտ սիրուն կանանչ հ'էգին չորանում, խազալ էր դառնում, աշնան պես չոր դեղնած յափըրաղը թափում։ Մի տարի, էրկու տարի էսպես անցնում է։ Թագավոր իր հ'էգու պտուղը չի ուտում։

Թագավորը իշթա լավ վարավուրտ արեց, թե տարվա որ ամսվա ու որ օրվա մեջն է էտ փորձանքը պատահում։

Օրըմ թագավոր կանչում է իրա իրեք տղին ու ասում է։

— Տղերք էս ինչ բան է, մենք տարին տասնէրկու ամիս աշխատում ենք, հ'էգի ենք կանչեցնում, ծաղկեցնում մե գիշերվա մեջ չորնում, խազալ է դառնում։ Ախր մեզի մե դուշման կա, որ գալում մեր սաղ տարվա աշխատանքը մե գիշերվա մեջ խազալ է դառցընում։ Մարդ եք, գնացեք, գիշերը մուզադ կացեք, տեսեք թե էտ ի՞նչ բան է, բալքի մե ճար անենք։

— Լավ է ասում մեր թագավոր հերը, սրով էրթանք պահենք, բալքի բռնենք։

Էկավ հասավ էն գիշերը, որ հ'էգին պիտի չորանա։ Մեծ տղեն

կոսե.— Էսօր հերթն իմս է, ես պիտի էրթամ մեր հ'էդին պահելու, տեսնիմ, թե վով է մեր դուշմանը։

Թագավորի մեծ տղեն առնում է իր սիլահները, էրթում թագնըվում է հ'էգու խոտերու մեջ, մի քոշա տեղ. ինչունի կես գիշեր զարթուն է մնում։ Կես գիշերին քունը տանում քնում է։ Առավոտուն զարթնում է, որ հ'էգին չոր խազալ է դառե։ Գլուխ կախ թողեց գնաց տուն։

Հ'եգսը տարին էկավ էլի էն ամսու էն օրը, էս անգամ նոբաթը միջնակ տղին էր։ Միջնակ տղեն հագավ իրա շորերը, կարեց իրա սիլահներ, գնաց հ'էգու մի քոշա տեղ խոտերու մեջ թագնվավ։ Ինչունի կես գիշեր զարթուն մնաց։ Կես գիշերվանից հետ քունը տարավ, քնավ։ Սաբահտան ելավ տեսավ, որ էլի հ'էգին չորցե խազալ է դարձեր։ Էտ էլ թողեց, գլուխ կախ գնաց տուն։ Էտ տարին էլ հ'էգին չորցավ։ Միջնակ տղեն տուրը տվեց։

Երկու տարին անցավ, երեք ղիանղա սրեն էկավ թագավորի պզդիկ տղին։ Էկավ հ'էգու չորնալու գիշերը։

Պզդիկ տղեն հ'ելավ հագավ շորերը, կարեց սիլահները, գնաց հ'էգու մի քոշա, խոտերու մեջ թագնվավ։ Կես գիշերին քունը տարավ։ Բռնեց գանկով մատը կռեց, աղ լցեց յարի մեջ կսկծաց, քունը փախավ, էլ քուն չէկավ։ Աղոթրնին մոտիկ, մեկ էլ տեսավ մի տրզման դև, մեկ մռութ էրկինք, մեկ մռութ գետին է հասնում։ Մտավ հ'էգին, դունչը տնկեց դեպի ծառներն ու բաշլայեց փչել, էտոր սոլուղը կրակի պես ծառերը էրում էր, խազալ էր դարձնում։ Տղեն տեսավ, որ մի քանի ծառ գոլեց. «Էլ յաղո՞ւզ եմ կեցել, տրհ մեկ նոր է սրեն էկել, ընձի սաղ մնալը հարամ էր»։

Տղեն քաշեց իրա նետ ու աղեղը, լավ նշան առավ դևին ու քցեց։ Նետը դիպավ դևի ծծից, յարալու արեց։ Դևը թողեց ու փախավ։ Տղեն բուսուիը ելավ ու ընկավ էնոր հետևից, տեսավ որ, արուն շոշռալեն, գետին ներկելով գնացել է։ Տղեն քշեց գնաց։

Լուսաբացին մոտ էր։ Թագավորի երկու մեծ տղեն էվատի հագան իրանց շորերը, ըսին.— Էրթանք տեսնենք ինչրխ արեց մեր պզդիկ աղբերը։

Գալում տեսնում են, որ հ'էդու մի քանի ծառ էլի դեղներ խազալ է դառե, մեկելները սիրուն կանանչ, ու իրանց աղբերն էլ չկա։ Տեսան որ հ'էգու միջեն արունի իզը խոտերն ու քարեր կարմիր ներկելով գնացեր է։ Հասկցան, որ տղեն էտ արնի ըզի հետն է գնացե.

Իրանք էլ հ'ընկան էտ արնի ըզովն ու քշեցին։ Քաֆ ու քրտնքի մեջ կորած, գնացին հասան պզդիկ աղբորը։

— Աղբեր, էս ի՞նչ հալբաթ է, դու յաղուղ մեզի էլ հ՚իմաց չէիր տալում, որ մենակ ես էրթում։

— Վալլահ չեք ասում, իշթը մի դև զարնի յարալու արի, փախավ, ես էլ հ՚ընկա ետևից, էրթում եմ տեսնեմ, հ՚ուրտե՞ղ կարամ բռնե։

Իրեք աղբերն էլ գնացին արնի բղով, որ դևին բռնեն սպանեն։ Էրթում հասնում են մի սարի։ Աշում են, որ սարի տակ ինչ որ ծակ էղնի ու էտ ծակի վրեն խուշկի է կիտած։ Արունի իզն էլ ինչունի հոտ է էկել ու կորել է։ Խուշկին բռնում հետ են տալում, աշում են, որ արնվա է էղել։ Տեսնում են, որ մի մեծ ծակ բացվավ ու դևն էլ էտ ծակից ներս է մտել։ Մեծ աղբոր ասում են.— Դու մեր մեծն ես, արի հ՚առաջ դու ներս մտիր։

Մեծ աղբերը վախենում, չի մտնում։ Միջնակին ասում են՝ էն էլ չի մտնում։ Պզդիկ աղբերը ասում է.— Որ դուք չեք մտնում, ես եմ մտնում։

Չվանըմ քցում պզդիկ աղբոր մեջքից կապում ու իջցում են ծակից։ Տղան ներս որ մտնում, աջում է որ մի դուռ, բաց է անում տեսնում է, որ օդի մեջ նստած է մի սիրուն, անլման աղջիկ քարկահ է անում։

Աղջիկը որ տեսնում է տղին ասում է.— Ցա, իսան օղլի, օձն իրա պորտով, հավքն իրա թևով էս տեղերից չի անցեր, դու մո՞նց ես էկեր։

— Ես մի դև զարնեցի յարալու արի, փախավ մտավ էս ծակից, ես էլ հետևից էկա, որ սպաննեմ։

Էտից անցավ մի ուրիշ դուռ բացեց, տեսավ մի ուրիշ աղջիկ, էլի նստած քարկահ է անում, էտ էլ էլի էն աղջկա խոսքն է ասում։

Անցնում մի ուրիշ դուռ է բանում, տեսնում է ամենից պզդիկ աղջիկ, արևին ու լուսնակին ասում է. «Դու մի հ՚ելնիր, ես հ՚ելնիմ»։

— Լավ էղավ,— տղեն կոսե,— էն հ՚առջի տեսած տղջիկը մեծ աղբորս, միջնակը՝ միջնակ աղբորս, էս էլ ընձի։

Թոփ է անում աղջկներին բերում է հորի մոտ, չվանը կապում է մեծ աղջկա մեջքից, ձեն է տալում աղբրտանց, որ քաշեն։ Աղբրտիքը քաշում, տեսնում են որ մի անլման աղջիկ։ Մեծ աղբերը ասում է.— Էս աղջիկը իմ համար է։

Չվան էլի են կախում, էս անգամ միջնակ քուրոջն են դուրս քաշում։

— Էս էլ իմն է,— ասում է միջնակ աղբեր։

Չվան էլի են կախում, էս հեղին սրեն պզդիկ քուրոջն է։

Աղջիկն ասում է տղին.— Հ'առաջ դու հ'ելի, նոր ես։

Տղան կոսե.— Չէ, դու պիտի հ'ելնիս։

Աղջիկը կոսե.— Ես որ հ'ելա, աղբրտիքդ ընձի որ տեսան, քեզի հորի մեջ կը թողնեն։ Արի կըլլի մի աներ, մի էղներ, դու հ'առաջ դուրս հ'ելի, հետո ինձ էլ կը հանես։

Ինչ արավ-չարավ աղի հետ իլլաճ չէղավ։

Տղեն էլ վախենում էր թե, ինք որ դուրս դա, աղջիկը իրան կը խափե, էլ չի հ'ելնի։

Տղեն աղջկներու ղալմաղալի հետ հ'ընկած դևին հ'իստակ մոռացել էր։

Աղջիկն էլ տեսավ, որ տղին չի կարա իրանից հ'առաջ հանել, հանեց իր մատնիքը տղին տվեց ու ասաց.— Այ տղա ես գիտեմ, որ աղբրտիքդ քեզի հորի մեջ պիտ որ թողնին, արի՛ առ էս իմ մատնին քու մոտ, կէրթաս էն իմ նստած հ'օդից էն ղին մի հ'օդա էլ կա, յարալու դևը օջխի քանարը պարկած է, էրկու դև էլ էնոր յարին դեղ են անում։ Ամա՝ հիմի հոն չեն, գնացեր են էնդից էնդին մի ուրիշ հ'օդա կա, հոն են։ Դուռ որ բացիր, յարալու դևը քեզի տեսածի պես ասում է. «Ցա, ինսանօղլի գու էստեղ էլ էկաբ», տեղից չի կարա հ'ելնի, իրա մոտն էլ մինակ իրա թութունի լուլեն է, որ մի լիտր թութուն կ'առնի կը, կը վերցնե կը ու կը քցե, դու քեզի մեկ թարավ քաշե, որ չ'դիպնի, հետո կ'էրթաս էնոր գլխի վերև կախած է իրա թուրը, կ'քաշես, մեկ կ'տաս շլինքը կես կոնես։ Դևը կոսե, թե. «Ինսանօղլի էտ չէղավ, մեկ էլ տուր», դու չէղնի թե տաս, թե չէ կը սաղնա քու մեծ կտորը քու անկաշդ կը թողնի, էնտից կանցնիս մյուս հ'օդեն, էն էրկու դևն էլ հոն են։ Դուռը բացիր թև չէ, էնոնք քեզ կոսեն. «Ցա, ինսանօղլի դու էս վախտ հո՞ս», դու կոսես, թե. «Ձեր մեծին եմ սպաններ, դուք պտի ընձի դե՞մ առնիք», էնոնք կոսեն. «Հ'ուզե մուրազդ տանք», դու կոսես թե. «Իմ մուրազն էն է, որ դուք ընձի հանեք լուս աշխարհ», էնոնք քեզի լուս աշխարք կը հանեն։

Տղան, էս խրատներուց հետո չվանը կապեց աղջկա մեջքից, աղբրտիքը քաշեցին, դուրս հանեցին, ի՞նչ տեսնին, էնքան մի սիրուն աղջիկ, որ արևին ասում է. «Դու մի հ'ելնիր, ես հ'ելնիմ»։

Ըստե նախանձվան իրանց աղբոր վրեն, տեսան որ իրանցները կ'էրթա էնորին մուժտա։ Չվանը կախեցին որ աղբորն էլ հանեն, քաշեցին ինչունի հորի կեսը, խանչալ քցին չվանը կտրին, աղբերը դրմբալով հ'ընգավ գետին։ Իրանք առան աղջկներին ու հայտե գնացին տուն։

Թագավորը տեսնում է որ առավոտուն հ'էգու մի քանի ծառ չորցել են ու մնացածները կանանչ սալամաթ մնացեր է, հ'էգու մեջն էլ արնի իզ կա, իրեք տղան էլ չկան։ Ասում է. «Վալլահ, կա չկա տղերքը մեր դուշմընին տեսել են, զարնե յարալու են արե, հ'ընկեր են հ'ետևից»։ Քիչ մնում տեսնում է, որ երկու մեծ տղեն իրեք հատ սիրուն հրեղեն աղջիկ առած գուզ էկան տուն։

Թագավոր տեսնում է, որ պզդիկ տղան չկա, հարցնում է մեկելներին թե.— Ի՞նչ արիք, հ'ո՞ւր է ձեր պզդիկ աղբերը։

Տղերքը ասում են.— Մենք էնոր տեղը չդիտենք։ Ամեն տարի մեր հ'էգին չորացնողը մի դև էր, էս տարի պահեցինք, էկավ, զարնինք յարալու արինք, փախավ, հ'ետևից հ'ընկանք, գնացինք իրա ծակի մեջ սպաննեցինք, էս իրեք աղջիկն էլ առանք էկանք։

Մենք խաբարը տանք տղից։ Տղեն օյամիշ է լինում, զարմանում է, թե. «էս ինչ փորձանք է էկել իմ գլխուա, ես էս հ'ուր տեղ եմ»։ Մեկ էլ կաջե մատնքին, միտքն է գալում աղջկա ասած խոսքերը։

Քիչ խելքը որ գալում է գլուխ, հ'ելնում էրթում է դևի հոդի դուռը բաց է անում, տեսնում է որ դևը պառկած է օջախի քանարը, ծանդր տքում է։ Մոնց որ տղին տեսավ.— Յա՛ խանօղլի դու հոս էլ էկա՞ր,—ասավ, ու իր ղայլունի գլուխը քցեց, տղեն իրան մեկ կողմը քաշեց, դիրավ պատին՝ պատը գռալեն բլավ։ Տղեն վազեց դևի թուրը քաշեց, մեկ հ'իջավ դևի շլնքին, շլինքը էրկու կես էղավ։

Դևը ասում է.— Խանօղլի, մեկ էլ տուր։

— Չէ,— կոսե տղեն,— ես իմ մորից մեկ անգամ եմ ծնել։

Դևը շունչը փչեց։ Տղեն դևի ջուխտ ականջն էլ կտրեց, դրեց իր ջերը, գնաց մեկել դուռը բացեց, տեսավ, որ էրկու դևը նստած են։ Տղին որ տեսան.— է՜յ,— գոռացին,— խանօղլի դու էստե՞ղ։

— Ձեր մեծն եմ սպաններ,— կոսե տղեն,— դուք պտի դեմ առնի՞ք։

Դևերն ասում են.— Ուզե, մուրազդ տանք։

Տղեն ասում է.— Իմ մուրազը էս է, որ դուք ընձի լուս աշխարհքը հանեք։

— Լավ, մենք քեզի լուս աշխարհքը կը հանենք։

Դևերն հ'ելան իրանց ձիերը պատրաստեցին։ Մեկի ձին սև էր, մեկելինը ղրա էր։ Ղրա ձիավորը տղին քաշեց իր թարքին ու ձիանները ուզանկուլամիշ արին։ Ձիանը թռան ղշի պես։ Քանի գիշեր էր, որ տղեն չէր քնած, քունը տարավ, քնավ։ Տղեն մեկ էլ աչքեր բանում տեսնում է, որ էկեր հասեր է իրա հոր սահմանին։

Տղան ասում է.— Շնորհակալ եմ, ինձի վեր դրեք, հիմի ես կարամ էրթալ։

Վեր են դնում, մնաս բարով անում ու դառնում են։

Քիչրմ էն քով էրթում, ետ են դառնում տղին կանչում են թե.— Արի էստեղ քեզի բան պտի ասենք։

Տղեն դալում է դևերի մոտ։ Դևերը ասում են.— Մեր ձիանու պոչից մեկ-մեկ մաղ քաշե, որ վախտ որ հարկավորութուն ունեցար, մաղերին կրակ տուր, մենք քեզ մոտ հազիր, նազիր կանգնած ենք, ինչ հ'ուզես կանենք։

Տղան մեկ-մեկ մազը կը քաշե, լավ տեղ կ'պահե ու մնաս բարով կոնե ու կը դառնա։

Տղեն գալում հասնում է հոր քաղքին, տեսնում է քաղքի քանրին մի մեծ բաղ, թազա շրում է մի ըխտիար բաղվանճի։

— Բարև քեզ, ամի, ընձի բաղվանճի չե՞ս բռներ, իշտը դու ծեր ես, ես քեզի կօգնեմ։

— Ասսու բարին, բարով էկար։ Ցաղուզ չեմ բռներ, սաղն ես հարցնում, ղաթի ես էլ մարդ էի ման գալում որ բռնեմ։

Մե օր, էրկ օր, մնում է, հ'էգսի օր տեսնում է տղեն, որ բաղի տերը հագավ իրա լավ շորերը հ'ուզում է էրթա։ Տղան ասում է.— Աղա, էտ հ'ուր ես էրթում։

— Էս օր մեր թագավորի մեծ տղան է պսակվում, էնոր պզդիկ տղեն ջիրինդ խաղալու է հելեր, էրթանք սեյր անելու։

Էտ տղին ղաթի օնչով չէր ճանչնում, թե թագավորի պզդիկ տղեն է, գիտեին թե մի քտչլիկ է։ Ճամբեն գալած վախտ, չոպներից մի ուլի փոր առավ, անցուց գլուխը, դառավ մի քաչալ մարդ։

Աղեն որ գնաց, տղեն Սև ձիու պոչը կրակ տվեց թե չէ, Սև ձիավորը հագած, սիլահները կապած էկավ աղի մոտը կանգնավ։

— Ի՞նչ է հարկավոր ասա, կատարեմ։

— Մի քիչ վախտ ձին ու շորերդ տուր ընձի, դու հոս կեցիր, ինչուի իմ գալը։

Դևի շորերը հագնում է, հեծնում է ձին, մի ծերնի թաց հաստ փետ առնում է ձեռքն ու քշում է մեյդան։

Էրթում տեսնում է, որ բոլոր հ'ելած են մեյդան, իրա միջնակ աղբերը ձին հեծած, մեյդնի կիսուն կայնել է, մեկ գլուխ ձին էս դին է քշում, մեկ՝ էն դին. մեկ էլ վրա է տալում, ծերնի թաց կոճով որ տալում է աղբոր, աղբերը քալլի վրա տնկվում է։

Սև ձիու գլուխը դարձնում է, հայդե դեպի հ'էգին։ Գալում մըտ-

նում է ճոռ հ'էգին, մեկ գլուխ էս դին է քշում, մեկ գլուխ՝ էն դին, թազա ջրած ճոռ հ'էգին էնենց է անում, որ հերկում տեղն ի տեղ թողում։ Գալում ձիուց հ'իջնում է, տալում է դևի շորերը, էլի հագնում է իրա քաչլի շորեր կանգնում է։ Դևն էլ քշում, կորում է։

Ինքը գալում բաղի դռան նիաթները կախում նստում է։ Տեսնում է, որ աղեն էկավ։ Հ'էգու հալը, որ աղեն չի տեսնո՞ւմ, խելքը գլխից թռնում է։

Բաշլամիշ կոնե տղին քֆրել թե.— էս ի՞նչ է էս ճոռ հ'էգու հալը։

— Ես ի՞նչ էնեմ աղա՛ ջան, մեկ անաստուծ սև ձիավոր քշեց մտավ հ'էգու մեջ, դես քշեց, դեն քշեց, վազեր եմ ձիու ոտներն եմ ընկեր, թե՝ իմ աղեն կգա, ընձի կսպանե նոր թողե գնացեր է։

Մի քանի օր անցնում է, էտ հ'էգու տերը էլի կապնում, իրա հ'էգին ջրում է ու հ'ելնում շորերը փոխում է, դրստվում է որ էրթա։ Տղեն էլի հարցնում է.

— Աղա, էսօր ո՞ւր ես էրթում, էլի շորերդ հագար։

— Էս օրն էլ թագավորի միջնակ տղի հարսնիքն է, պետք է պսակվի, մեծ աղբերը ջիրինդ խաղալու պտի դուրս գա, էրթում եմ սեյր անելու։— Ասում է ու թողնում էրթում է։

Էս անգամ տղեն Ղրա ձիու մազն է կրակին տալում։ Մեկ էլ տեսնում է, որ Ղրա ձիավորը իրա դեմը կանգնավ։

— Հա՞, մուրազդ ի՞նչ է, հ'ուզե սամ։

Տղեն կոսե.— Հ'իշի ձիուց, շորերդ ընձի տուր, ես պետք է ձին հեծնիմ էրթամ ջիրինդ խաղալու։

Դևը ձին ու շորերը տալում է քաչլին, քաչալը լիրասը փոխում է, հեծնում է Ղրա ձին, թաց ծերնի հաստ փետրմ առնում է ձեռքն ու ձիու գլուխը դարձնում է դիպա մեյդանը։ Մեկ գլուխ էս կողմն է քշում, մեկ էն կողմը, տեսնում է որ իր մեծ աղբերը մեյդանը առել ա հալդից։

Մոնց կոնե, ձին էս կողմ, էն կողմ կը քշե, բիրտան քշում է աղբոր վրեն, թաց ծերնով որ մի ջիրինդ զարնում է աղբոր, քալլի վրա ձիուց վեր է բերում։ Թագավորի տղա էսօր ես մեռե, թե մեկ տարի հ'առաջ։ Հ'ինք էլի ձին քշում գալում է մտնում թազա ջրած հ'էգին, մեկ գլուխ էս կողմն է քշում, մեկ էն կողմն է քշում, ճոռ հ'էգին հերկում, թողնում է տեղ։ Գալում ձիուց հ'իջնում է, ձին ու շորեր էլի տալում է դևին, հ'ինք իրա քաչլի շորերը հագնում է ու նստում նիաթներ կախած հ'էգու դուռը։

Աղեն դալում, որ հ'էգու օրը չի տեսնո՞ւմ, քաշում է քաչլին տուր որ կուտաս։

— Աղա ջան, ես ի՞նչ եմ արել, որ ընձի նահախ տեղ ծեծում ես։

— Դու ի՞նչ ես արել, դու քու արածը չգիտե՞ս, դու իմ տունը քանդեցիր, գնա՛ էս տեղերից կորի, թե չէ քեզի կը սատկեցնեմ։

Քաչլիկը էստից փախնում գալում է քաղաք, էրթում մի ղուլումջու մոտ աշկերտ է մտնում։ Ղուլումջին էլ աշկերտ էր ման գալում, աշկերտը իր ոտքով էկավ։ Ղուլումջին էլ Քաչլիկին իր մոտ աշկերտ բռնեց։

Թագավորի հարսերը տեսնում են, որ էրկու անգամ մի ղարիբ ձիավոր, մե հաղ Սև ձիով, մե հեղին էլ Ղրո ձիով մտավ մեյդան, տվեց թագավորի տղերանց ձիուց ցած բերեց ու քշեց կորավ։ Հարսների պզդիկ քուրը հասկցավ, որ թագավորի պզդիկ տղեն դուրս է էկե լուս աշխարհք։ Ինքն էլ զաթի իմաստուն էր։

Հ'ելնում պզդիկ քուրը էրթում է իրա մեծ քուրոջ մոտ ու ասում է.— Էսօր քու պսակվելու օրն է, չէղնիմ, չիմանամ որ դու պսակվես։ Քեզի որ կը հարցնեն, կոսես. «Ինչունի թագավոր էստեղ չբերե օսկե սինին, օսկե խորոզն ու կաքավը մեջ խաղան, որ քաղքի մարդիկ թոմարի թոփ էղնին սեյր անեն, ես պսակվողը չեմ». դու էսենց որ կոսես, թագավոր բերել կ'տա։

Թագավորի մեծ տղի նիշանածին էրթում են, որ տանեն պսակ, ասում է.— Ինչունի որ թագավոր կբերի մի հատ օսկե սինի, օսկե խորոզն ու կաքավը մեջ կ'խաղան, որ հալղը թոփ էղնին սեյր անեն, ես նոր պսակ էրթամ, թե չէ էսենց ամոթ է, ես մո՞նց դուրս հ'ելնիմ։

Էրթում թագավորին ասում են, թե քու մեծ հարսը էսենց է ասում։

Թագավորը կանչում է իր քաղքի միջի ինչքան որ ղուլումջի կա ու ասում է.— Ձեզ ինչքան օսկի հարկավոր է տարեք իմ խազնից։ Քառսուն օր ձեզ վատա, կը շինեք մի օսկե սինի, օսկե խորոզն ու կաքավ մեջ, իրար հետ խաղան, շինեցիք՝ շինեցիք, չը շինեցիք՝ ձեր թոմրի գլխներ կուտամ։

Օսկերիշներ դառան գնացին։ Ամեն օր թոփ են էղնում Քաչլիկի ուստի թուքանը, իրանց ուստաբաշու մոտ, թե.— Ինչրխ անենք, մեր գլուխ մոնց աղատենք թագավորի ձեռից։ Հալա՛ մենք էտոնք թոմարի շինենք, մենք խորոզն ու կաքավը մո՞նց իրար հետ խոսեցնել տանք։

Հ'ամեն օր էսենց թոփ էին էղնում ուստաբաշու մոտ, խոսում,

խոսում, հ'ելնում մոլրածի պես ցրվում, էրթում էին։ Էկավ հ'երսունուիններ օրը լմնցավ, մնաց հետի օրը։ Էլի ուստեք թոփ էղան, էկան ուստարաշու թուքանը, թե.— Հ'որե՞նց անենք, հ'էգուց մեր գլխներ կ'տա թագավոր։

Քաչլիկ տղեն ընտից գալում խառնվում է թե.— Ուստա ջան, էտ ի՞նչ է եղել, որ էս քառասուն օր է ամեն օր դուք թոփ եք էղնում ու ցրվվում եք, ինձ էլ ասեք, ի՞նչ կոնե։

— Տո՜, կորիր, քաչալ մունտառ, դու էլ մեր դարտից վազ չես գալում, դու ինչա՞ցու ես, դու մեր դարտին ի՞նչ դարման կարաս անել, որ քեզ էլ ասենք։— Ամեն մեկ կողմից շրկացուցին խեղճ Քաչլիկի գլխուն։

— Ջանըմ, յաղո՞ւզ եք իմ գլխին տալում, ի՞նչ կըլլի որ ասեք, հալբաթ ես էլ մարդ եմ, ձեր դարտին մի ճար կոնեմ։

Քաչալը շատ որ յալվար կոնե, ուստեսներից մեկը կոսե.— Աղբեր, էս տղան որ էսքան յալվար է անում, էստուր էլ ասենք, ըտից խո մեզի վնաս չկա, բալքի թե էս մարդն էլ մի բան դիտե։

Ըտտի պատմում են, թե թագավոր իր մեծ տղին պսակելու համար ինչ է հ'ուզել իրանցից, ու էսօր էլ վերջի օրն է, որ իրանց գըլխներ պիտի տա թագավորը։

— Վա՜յ, հեր օրհնածներ, ես էլ գիտեմ մի ծանտր բան է էղած, տո՛, դուք էտուր հմա՞ր եք ամեն օր թոփ էղնում, ուստես խո էս քառասուն օր է հաց չի ուտում։ Հեչ մի վախենաք, դուք էս գիշեր ընձի մի կոտմ ֆնտղ բերեք ու խելլիմ էլ օսկի, ես ինչունի առավոտ օսկե սինին, օսկե խորոզն ու կաքավը մեշ ճլվլալեն ձեզի չտվեցի իմ գլուխը տվեք։

Ուստեկուց որն ասավ կարա, որն ասավ չի կարա։ Էլի էն ուստեն կոսե.— Աղբե՛ր, մենք որ, չենք կարա շինել, տեհ բերեք էս մարդու ուզածը տանք, էղավ, էղավ, չէղավ՝ ղաթի մեր գլուխներ որ կ'էրթա, առավոտ քառասուն օրը լմնում է։

Հ'իրիկուն բերին մի կոտ ֆնտղ, խելլի էլ օսկու քուլիլա տվին քաչլին, դուռը կողպեցին ու թողին գնացին։

Քաչլիկը կրտկը վառեց նստավ, թախկ-թուխկ ֆնտրղը ջարդում ու ուտում է։ Ֆնտրղը կերավ հատավ, յափունչին քաշեց գլխին ու քնավ։ Քնավ ինչունի լուսուդեմ, հ'ելավ ձիանու մազերը կրտկ տվեց, տեսավ էրկու դևն էլ հ'առաջ կեցան։

— Հ'ուզե տանք,— կոսեն։

— Իմ հ'ուզածը ձեզնից էս է՝ կը բերեք էս սհաթին օսկե սինին, օսկե խորոզն ու կաքավը մեշ կուվին։

Մեկ աչք բանալ խփելու մեջ աղան տեսավ, որ օսկե սինին, օսկե կաքավն ու խորոզը մեջ, իր առջև դրին ու դևերը գնացին։

Լուսն էլ բացվավ, տղեն մեկ էլ տեսավ թախկ-թուխկ դուռը տվին, աղեն հ՚ելավ աչքեր տրորելով դուռը բացեց, շտապոք էլի էկավ յափունջին քաշեց գլխին, սինին էլ տակը պահեց ու պարկավ։ Ուստեքը էկան տեսան, որ ֆնտըղը կերել կպեճը թեճ է արել, ուրիշ բան չկա։ Պարկած տեղը մե թագմիկ ուստեն տվեց տղին։

— Հ՚ո՞ւր է քու շինած սինին, դու մեզի ումուտով արիր ու հիմի էլ դինջ քնում ես։

Տղեն հերսոտ, տեղեն շտկվավ ու յափունջի փեշը որ նեն չը տարավ, ուստեքու բերները մնաց բաց, որ տեսան օսկի սինին, օսկի խորոզն ու կաքավը մեջ կռվելիս, ընկան Քաչլիկի հ՚ոտներ ներողություն խնդրեցին։

Առավոտ կանուխ թագավոր մարդ ճամբեց ուստեքու հետևից, որ օսկե սինին բերեն։ Ուստեք թուփ էղան, առան օսկե սինին, օսկե խորոզն ու կաքավ մեջ, տարան թագավորի հ՚առջև դրին։ Թագավոր որ տեսավ խել ու իմանը գնաց։—Հայտե,—կոսե,—մի խազնա օսկի տվեք ուստեքուն։

Տարան օսկե սինին իր թախումով դրին մեծ հարսի առջև։

Մեծ քուրը որ տեսավ ալբեալ ճանչըցավ, որ էս դևերուն է։ էն էլ հասկցավ, որ թագավորի պզդիկ տղեն լուս աշխարհքն է հ՚ելած։

Տարան էտ օսկե սինին դրին թագավորի խաս բախչի մեջ։ Ինչքան որ քաղքի մեջ մարդ կար թուփ էղան էկան։ Օնչով չէր տեսած էտենց մի զարմանալի բան՝ օսկի սինու մեջ օսկե խորոզ ու կաքավ կռվում էին, խաղում քեֆ էին անում։

Նոր, թագավորի մեծ հարսը գնաց պսակվավ, էկավ։

Հ՚եգսի օրը թալլալ էլի կանչեց, որ. «Ինչքան որ քաղքի մեջ մարդ կա էլի էրթա թագավորի խաս բաղչեն, օսկի խորոզին ու կաքավին սեյր անե, որ թագավորի միջնակ տղեն պսակվի։ Էտ օր էլ թագավորի միջնակ տղեն պսակվեցավ։

Դևերու էրկու մեծ տղչիկը պսակվան։ Մնաց արեգակից ու լուսնակից սիրուն պզդիկ քուրը։ Էտ պզդիկ քուրը կոսե.— Ինչքան որ էս քաղքի մեջ վազիր նազիրներ կան թող էնոնց տղերքը մեկ-մեկ գան իմ մոտ, հ՚որին որ ես հավնեցի՝ էնոր կառնիմ, հ՚որին որ չ՚հավնեցի՝ գլուխը կուտամ։

Շատ իշխաններ, շատ վազիր նազիրների տղերք գալում են աղջկա մոտ, աղջիկը թոմրի գլուխներ կռում է, հեչ մեկին էլ չի հավնում։

Մեկ օր էլ աղջիկը հրաման է տալում թե.— էն օսկե սինին, խորոցն ու կաքավ շինող ուստեն թող գա իմ մոտ, աշեմ, ես էնոր կառնիմ։

Ուստեքը բաշլայում են իրար հետ կռվել, էն ասում է. «ես եմ էրթում», էն ասում է՝ «ես»։ Սոնդ աղջիկ իմանում է, որ էսենց չլինի, ասում է.— Ինչքան որ ղուլումչի կա թող գան իմ փանջարի տակից անցնին, հ՚որին որ ես օսկե խնձորով տվի, էնոր կ՚առնիմ։

Հ՚ելնում ղուլումչիք թոմար զուքվում են, թափտիր են տեսնում, որ գան։

Քաչլիկը կոսե.— Ուստա, ես էլ եմ գալում։

— Տո՛, կեղտոտ Քաչլիկ, դու հ՚ո՞ւր ես գալում, քու էտ կեղտոտ ջորերիդ ու քաչալ գլխիդ կարոտը վո՞վ է քաշում. դե վեր չորցիր ըստեղ էլի։

— Չէ, ուստա ջան, հոգուտ ղուրբան, ես էլ եմ գալում։ Ես էլ քու հ՚ետևեն քու շալվրի ձագը կը վերցնեմ, որ չճոռոտի, ամոթ է, բալքի աղջիկ քեզի հավնավ։

Չէ՛, Քաչլիկն էլ ուստի ձագը վերցնելով գնաց ղուլումչոց հետ։

Սաղ քաղաքը թոփ է էղել սեյր անելու։ Աղջիկը փանջարի դեմ կայնել է։ Ղուլումչիք սատա օսկի ու արծաթ են հագե, էնենց որ արևի պես փելում են։ Թոմարի էկան սրով մեկ-մեկ անցնում են փանջարի տակից։ Աղջիկն էլ օսկե խնձորը ձեռաց մեկ-մեկ աշում է։ Թոման էկան անցան, բան չէղավ, վերջ էկավ ուստեն ու իր աշկերտը, որ հ՚ետևեն ուստի ձագը վերուցեր գալում էր։ Էկան փանջարին տակը թե չէ, աղջիկը ճանչցավ տղին ու խնձորը հայդե քցեց, ընկավ Քաչլիկի ու իր ուստի մեջ տեղ։

Անցան էն կողմ, բաշլայեցին իրար հետ կռվել, էն ասում է. «Ինձի քցեց», էն ասում է. «Ինձ»։

— Ուստա, չի համար ես հախսըզութուն անում,— կոսե մեկել ուստեն,— իշտա քու աշկերտին քցեց։

— Չէ,— էլի զոռում է ուստեն,— իլլահի ընձի քցեց։ Էս մունտառ քաչալը ի՞նչ է, որ ըստուր, օսկե խնձորով, աղջիկը զարնե։

Քաչլիկը կոսե.— Ուստա, մի նեղենա, արի մեկել բաղշա-բաղշա էրթանք, էս հեղին բայլու կոնե։

Ուստեն հ՚առաջ գալում անցնում է փանջարի տակից, աղջիկը տեր չի էղնում, կոսես թե իսկի մարդ չ՚անցավ։ Գալում է Քաչլիկ փանջարի տակ թե չէ՝ յալլա խնձորը Քաչլիկի մեջքին։ Սաղ քաղքի թոփ էղած իշխններ հա՜յ էրեցին, ծիծաղացին.— Հլա դու ըստոր աշե, որ էս մունտառ Քաչլիկին հավնավ։

էն ուստեն էլ ամոթու գլուխը կախեց ու թողեց հեռեցավ։

Թագավոր Քաչլիկին ներս կանչեց։ Տղի հ'ետևեն թոփ էղան ինչքան որ վաղիր նազիրներ կան, իշխաններ, գնացին ներս մտան։ Ասին.— Հլա տեսնենք, էտ տղեն հ'որենց տղա է, ինչ հունար ունի, որ աղջիկը ըստուր հավնավ ու մեր տղերանց գլուխը կռել տվեց։

Գնացին իշխաններ ու մաճլիսներ, թագավորի գիվան նստան։

Ներս է մտնում Քաչլիկը, սորոտի մեկը, օշխրի չոր փորը գլուխն է անցուցե, քռչոտ ջորեր հագե, էկավ հոն կեցավ։

Իշխաններ կոսեն.— Թագավոր, դու ի՞նչ հասկցար էս անզգամ աղջկա մոտեն, մեր լուսի պես տղերանց գլուխներ կռել տվեց, էս քաչալ սորոտին հավնավ։

Թագավոր Քաչլին հարցնում է թե.— Տղա, դու ի՞նչ մարդ ես, հ'ուրտից ես, ի՞նչ հունար կա քու մեջ, որ աղջիկը քեզի հավնավ։

— Թագավոր ապրած կենա, ես մի քասիր մարդու տղա եմ, անտեր անտիրական, էկա հ'ընկա էս քաղաք։ Էս աղջիկ քո՞ւ աղջիկդ է, որ խնձորով զարկեց, լերդս յարա արեց։ Էտ աղջիկ իմ ինչիս հավնավ, իմ քաչալ գլխի՞ս, թե էս կեղտոտ շորերիս։

Թագավոր կոսե.— Չէ, էդի իմ աղջիկս չէ, իմ տղերքս են բերած։ Իրեք աղջիկ էր, էրկուսը պսակեցի իմ տղերանց վրեն, էս մնաց, իշթա էս էլ քեզի հավնավ։

— Թագավոր ապրած կենա, զաթի դու էրկու տղա ունեիր, էլ ուրիշ տղա չունի՞ս։

— Ես իրեք տղա ունեի։ Ես մի հատ էլ լավ հ'էգի ունեի, ամեն տարի մի դև գալում իմ հ'էգին չորցնում, խազալ էր դարձնում։ Տղերքըս սրով պահեցին։ Էրկու մեծ աղի սրին էլի հ'էգին չորցավ, սրեն որ էկավ պզդիկ տղին, էն գիշեր մի չորս-հինգ ծառ չորցավ, մեկել հ'էգին սալամաթ մնաց։ Էս էրկու մեծ տղերքս գիշեր հ'ելան իրանց պզդիկ աղբոր հետ հ'ընկան դևի հ'ետևից, ըստոնք հասան դևին սպաննեցին ու էս իրեք աղջիկն էլ բերին։ Ընդից հետո էլ հ'էգին էլ չը չորացավ ու էն տղես էլ կորավ բեգյուման։

— Թագավոր ապրած կենա, չըլլի որ մի խնդիրք անեմ քեզնից, հալա դու էտ քու էրկու մեծ տղին կանչե գան հոս։

Թագավորի էրկու տղեն գալում կայնում են դիվանը։ Քաչալը հարցնում է.— Դուք ինչրխ սպաննեցիք դևին։

Տղերք կոսեն.— Մեր հ'էգու մեջ բռնեցինք, տվինք յարալու արինք, փախավ, հետևից քշեցինք, փախավ մտավ իր բունը, մենք էլ հ'ետևից մտանք սպաննեցինք, առանք էս աղջիկներ էկանք։

— Է՞հ, ես բան չունիմ ասելու, թագավոր ապրած կենա, հլա

էս մարդկանց հարցուցեք, թե դևին որ սպաննեցիք, նշան ունի՞ք ձեր մոտ, թե որ ունիք կը հավատամ։

— Մեր նշանները մեր բերած աղջիկներն են, մեր հ՚էգին էլ չի չորանում, ըստից էլ լավ նշան։

— Թագավոր ապրած կենա, էստոնք սուտ են ասում։ Դևին դուք սպաննեցի՞ք, թե ես։ Ես չմտա՞ աղջիկներին մեկ-մեկ դուրս հանեցի, սրեն որ ընձի էկավ դուք քաշեցիք հանիք ինչունի հորի կեսը, խանչլով չվանը կտրիք ես հ՚ընկա հորի մեջ, իմ խելքս գնաց, հետև հ՚ելա դևին սպաննեցի, դուրս էկա հորից։ Էկա գնացի բաղվանչու մոտ մշակ էղա։ Մեծ աղբոր ջիրինդ խաղալու օր ես էի, որ Սև ձիով մեյդան մտա, տվի պղդկի խելքը անցուցի, գնացի ձին քցեցի թագա ջրած հ՚էգու մեջ քանդ ու քարար արի։ Մյուս օր միջնակի ջիրինդի օր էլի ես էի Ղրո ձիով մտա մեյդան, տվի մեծ աղբոր խելքը անցուցի, ձիուց վեր բերի։ Էլի քշեցի ձին, հ՚ընկա ճոռ հ՚էգու մեջ։ Աղես էկավ ընձի ծեծեց։ Էնտից էկա ղուլումջու մոտ աշկերտ մտա, օսկե սինին, օսկե խորոդն ու կաքավը ես բերի, թե որ չեք հավատում ահա,— ասավ ու քաշլի փոստը գլխուց հանեց նեն քցեց, քոչոտ շորերն էլ հանեց, ջերից հանեց դևի հ՚անկըջներ ու քցեց թագավորի հ՚առաջ։

Թագավոր նոր ճանչցավ իր պզդիկ տղին, հ՚ելավ փաթվավ շլընքով։ Աղբրտիքն էլ հ՚ոտներն հ՚ընկան, մեղա ասսու ասին։

Թագավոր տղի համար թազա հալավներ կռեց, բաղնիք տարավ։ Քառասուն օր, քառասուն գիշեր հարսնիք արավ, կերան, խմեցին։ Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ ձեր մուրազին։